

U-53

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՇՈՏ ԱՐՄԵՆԻ

ՍԻՐԻԱՆ ՀԵՏՎԱՅԵԶՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ, ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ
ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐՆԵՐԸ

Է.00.02 «ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ ԴԱՏԱՈՒԹՅՈՒՆ» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

Երևան 2009



Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆ. Ն. Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ա. Պ. Փոլադյան
բանասիրական գիտությունների թեկնածու Դ. Ա. Հովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2009թ. հունիսի 9-ին, ժ. 13.00-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2009թ. մայիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

Ռ. Ղազարյան

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2000թ. Բաշար ալ-Ասադի իշխանության գալով Սիրիան թևակոխեց զարգացման որակապես մի նոր փուլ, որը կարելի է բնութագրել որպես անցումային ժամանակաշրջան: Մերձավորարևելյան տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունները, նրա վերածակվորմանը միտված գործընթացների ակտիվացումը, լարվածության նոր օջախների առաջացումը, ուժային առանցքների շուրջ ընթացող վերադասավորումները, 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ահաբեկչության դեմ հռչակված գլոբալ պատերազմը, համաշխարհայնացման գործընթացի արագացող տեմպերը չէին կարող չըջանցել հաճախ իրադարձությունների կիզակետում հայտնվող Սիրիան: Ակնհայտ էր, որ նախկին նախագահ Հաֆեզ ալ-Ասադի օրոք (1970-2000) ստեղծված քաղաքական, տնտեսական համակարգն ի վիճակի չէր լինելու դիմակայել պարտադրվող մարտահրավերները: Հարց առաջացավ, թե ի՞նչ ձանապարհով առաջ կշարժվի Սիրիան, և մինչև ու՞ր կհասնեն նոր նախագահ Բաշար ալ-Ասադի հայտարարած քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումները, և արդյո՞ք դրանք բավարար կլինեն ապահովելու համար երկրի սահուն առաջընթացը: Այդ և նման այլ արդիական հարցերի լուսաբանմանն է նվիրված սույն ատենախոսությունը:

Սիրիան առանցքային դերակատար է տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում: Մերձավոր Արևելքի ապագան, նրա խաղաղությունը, կայունությունն ու անվտանգությունը շատ բանով կախված են նրանից, թե Սիրիան ի՞նչ դիրք կգրավի, և թե Սիրիայում տեղի ունեցող փոփոխություններն ի՞նչպես կանդրադառնան հանգուցային հարցերի շուրջ նրա դիրքորոշումների վրա: Սույն թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է այդ քաղաքական, տարածաշրջանային հարաբերությունների, սոցիալ-տնտեսական, հասարակական փոփոխությունների դինամիկան ըմբռնելու անհրաժեշտությամբ:

Թեման ինքնին արդիական է, քանի որ վերոնշյալ ուսումնասիրվող գործընթացները տարբեր ազդեցությունների ներքո կարող են ենթարկվել անսպասելի շրջադարձների: Ուստի դրանց վերլուծությունը և իրատեսական գնահատականները հնարավորություն կտան համեմատաբար կանխատեսելի դարձնել այդ

գործընթացները և ըստ անհրաժեշտության դրանց հետևանքներին արագ արձագանքելու հնարավորություն կընձեռեն:

Ներկա աշխատությունում բարձրացվող հարցերը կարևոր են նաև համաշխարհայնացման դարաշրջանում նոր զարգացող երկրներում տեղի ունեցող տնտեսական բարեփոխումներին, ժողովրդավարացմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը բնորոշ օրինաչափությունների և առանձնահատկությունների բացահայտման և ուսումնասիրման առումով:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մերձավորարևելյան ուղղության մոտեցումները, ինչպես նաև Սիրիայի հետ երկկողմ քաղաքական և առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման սկզբունքները մշակելու տեսանկյունից՝ նկատի ունենալով, որ Սիրիան Հայաստանի կարևոր գործընկերներից է այդ տարածաշրջանում, իսկ թուրք-սիրիական հարաբերություններն այսօր ընդգծված բարեկամական բնույթ ունեն և գտնվում են բարձր մակարդակի վրա: Այդ հանգամանքը և հայ-սիրիական հարաբերությունների բարձր մակարդակը, Հայաստանի շահագրգռվածությունը մերձավորարևելյան տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման գործում լրացուցիչ կարևորություն են հաղորդում ընտրված թեմային:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի նպատակն է Հաֆեզ ալ-Ասադի վախճանից հետո Սիրիայում տեղ գտած փոփոխությունների համակողմանի հետազոտումը, որի համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Դիտարկել Սիրիայում իշխանության շարունակականության պահպանման հնարավորությունները, այդ ուղղությամբ գործադրված քայլերը և Բաշար ալ-Ասադի իշխանության գալու առանձնահատկությունները:
- Ի հայտ բերել Սիրիայի քաղաքականության մեջ նոր միտումների և տեղաշարժերի դրսևորումները Բաշար ալ-Ասադի նախագահության սկզբնական շրջանում:

- Ուսումնասիրել Սիրիայում քաղաքացիական հասարակության շարժման ձևավորման ընթացքը և առանձին փուլերը, նրա՝ քաղաքական ընդդիմության վերածվելու դրդապատճառները:
- Հետազոտել Բաշար ալ-Ասադի նախաձեռնած ներքաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների յուրահատկությունները, դրանց սահմանափակ լինելու պատճառները և հնարավոր հետևանքները:
- Վերլուծել տարածաշրջանային հիմնախնդիրների շուրջ Սիրիայի վարած քաղաքականությունում տեղ գտած փոփոխությունները և ի հայտ բերել դրանց պատճառահետևանքային կապը:
- Ճշտել Բաշար ալ-Ասադի տարածաշրջանային քաղաքականության առջև դրված խնդիրների իրական բնույթը և դրանց լուծման հեռանկարները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի արժանացել հատուկ ուսումնասիրության և առանձին աշխատությամբ չի ներկայացվել: Առյու ուսումնասիրությունն այդ առումով առաջին գիտական փորձն է ամբողջական և համալիր ուսումնասիրության ենթարկելու Սիրիայի քաղաքականությունը 21-րդ դարի առաջին տասնամյակում:

Գիտական նորույթ են Սիրիայի հետախնդրման շրջանում տեղ գտած քաղաքական և սոցիալ-տնտեսական մի շարք վերափոխությունների, ի հայտ եկած տարբեր գործընթացների յուրովի մեկնաբանությունները և գնահատումը, որոնք բխում են հեղինակի կողմից մեզանում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող հարուստ փաստագրական նյութերից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 2000-2009թթ.՝ Բաշար ալ-Ասադի՝ 2000թ. Սիրիայում իշխանության գալուց հետո ընկած ժամանակաշրջանը ընդհուպ մինչև մեր օրերը: Ըստ անհրաժեշտության անդրադարձ է կատարված նաև Հաֆեզ ալ-Ասադի իշխանության (1970-2000) տարիներին վերաբերող

իրադարձություններին: Ընտրված ժամանակային հատվածը Սիրիայի նորագույն պատմությունում առանձնանում է որպես անցումային, վերափոխումների և վերարժևորումների ուրույն ժամանակաշրջան:

ՍԿԶԲՆԱԿՐՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն և արաբերեն լեզուներով տարաբնույթ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Հետազոտության համար որպես կարևոր սկզբնաղբյուր են ծառայել ՍԱՀ նախագահ Բաշար ալ-Ասադի տարբեր առիթներով ունեցած ելույթներն ու հարցազրույցները, որոնցում արտացոլվել են Դամասկոսի ներքին և արտաքին քաղաքականության նոր մոտեցումներն ու դիրքորոշումները¹: Օգտակար են եղել նաև սիրիացի քաղաքական, պետական մի շարք գործիչների հրապարակային ելույթները², միջազգային կազմակերպությունների ընդունած բանաձևերը, քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների հայտարարություններն ու որոշումները³, Սիրիայի Արաբական Հանրապետության Սահմանադրությունը և այլ պաշտոնական փաստաթղթեր և նյութեր⁴:

Հեղինակը լայնորեն օգտագործել է այնպիսի միջազգային կազմակերպությունների, գիտա-հետազոտական հաստատությունների և վերլուծական

¹ 17.07.2000. كلمة السيد الرئيس الدكتور بشار الأسد عقب أدائه القسم الدستوري أمام الجلسة الاستثنائية لمجلس الشعب، www.cfiit.net/index.html; 07.03.2000. الحياة، باتريك سيل، بشار الأسد و باتريك سيل، www.cfiit.net/index.html; 08.02.2001. الشرق الأوسط "بأول الحديث بين السيد الرئيس بشار الأسد و باتريك سيل، حياة منذ توليه الرئاسة، الشرق الأوسط"، www.presidentassad.net/INTERVIEWS/ASSAD%20LEFIGARO%20INTERVIEW.htm; Syrian Pressing for Israel Talks: Interview with Bashar al-Assad. The New York Times, Dec. 1, 2003; Van Buren A. & Lombardozi N., Interview with Bashar al-Assad, La Repubblica, Feb. 28, 2005, www.presidentassad.net/INTERVIEWS/ASSAD%20LA%20REPUBBLICA%20INTERVISTA.htm; كلمة السيد الرئيس الرئيس الأسد يلقي كلمة خلال افتتاح أعمال المؤتمر العام الرابع لاتحاد الصحفيين، سانا، بشار الأسد أمام مجلس الشعب، سانا، 05.03.2005. 15.08.2006.

² خير اقتصادي: سورية أصبحت دولة مصدرة للنفط وإيراداتها منه تصل إلى 70%، الشرق الأوسط، 18.11.2002. وزير الدفاع السوري مصطفى ملاح يصرح في مقابلة لمجلة "المجلة"، المجلة # 108، 6.05.2001.

³ Statement by 99 Syrian Intellectuals, Middle East Intelligence Bulletin 2, No. 9, www.meib.org/articles/0010_sdoc0927.htm; The Statement of 1000, www.friendsofsyria.net/documents/008.html; The Damascus Declaration for Democratic National Change, <http://faculty-staff.ou.edu/L/Joshua.M.Landis-1/syriablog/2005/11/damascus-declaration-in-english.htm>; Text: Arab peace plan of 2002, http://news.bbc.co.uk/1/hi/world/middle_east/1844214.stm; Report of the International Independent Investigation Commission Established Pursuant to Security Council Resolution 1595 /2005/, UN, Oct., 2005, www.un.org/News/dh/docs/mchlisreport

⁴ الدستور السوري www.dostoor.jeeran.com/5%D8%A7%D9%84%D8%AF%D8%B3%D8%AA%D9%88%D8%B1%20%D8%A7%D9%84%D8%B3%D9%88%D8%B1%D9%8A.htm

կենտրոնների ամփոփագրերն ու հաշվետվությունները, ինչպիսիք են Ամենաբի Ինթերնեյշնլը⁵, Օքսֆորդի բիզնես խումբը⁶, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի հետազոտական կենտրոնը⁷, ԱՄՆ Խաղաղության ինստիտուտը⁸, Միջազգային խաղաղության Քարնեգիի հաստատությունը⁹ և այլն:

Փաստերի և վավերական նյութերի հավաքագրման համար աղբյուր են հանդիսացել նաև անգլալեզու և արաբալեզու մի քանի տասնյակ պարբերականներ և լրատվական գործակալությունների էլեկտրոնային կայքեր, որոնցից հիշատակելի են «ալ-Բասա», «ալ-Սաուրա», «Թիշրին», «ալ-Սաֆիր», «Ախբար ալ-Շարկ», «ալ-Հայաթ», «ալ-Շարկ ալ-Աուսատ», «ալ-Նահար», «ալ-Ուսբու ալ-Արաբի», «ալ-Ուստան ալ-Արաբի», «ալ-Մուսթալկալ», «Միդլ Իսթ Միրոր», «Նյու Յորք Թայմզ», «Քրիսչըն Սայնս Մոնիթոր», «Ուոշինգթոն Փոսթ», «Գարդիան», «Դեյլի Սթար», «Ջերուզալեմ Փոսթ», «Լը Ֆիգարո», ՍԱՆԱ, Ֆրանս Պրես, Ուոյթերս, ԲիԲիՍի, ալ-Ջազիրա և այլն:

Հայրողի առջև կանգնած խնդիրների լուծմանը մեծապես նպաստել է պրոֆ. Ն. Հ. Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն» քառահատոր ֆունդամենտալ աշխատությունը, որն իր տեսակի մեջ առաջինը և միակն է հայ արաբագիտության մեջ: Նրա չորրորդ հատորում հանգամանալից վերլուծության են ենթարկված Սիրիայի նորագույն պատմության ներառյալ մինչև 2005թ. տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները¹⁰:

Ատենախոսության համար օգտակար են եղել նաև օտար հետազոտողների մի շարք մենագրություններ, որոնցում լուսաբանվում են Սիրիայում վերջին տարիներին տեղի ունեցող քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացները, ինչպես նաև արտաքին և տարածաշրջանային քաղաքականության մեջ կատարվող տեղաշարժերը:

⁵ Amnesty International Report: Syria 2001, 2005.

⁶ The Report: Emerging Syria 2008, Oxford Business Group, www.oxfordbusinessgroup.com/publication.asp?country=6

⁷ Sharp J.M., Syria: Background and US Relations, CRS Report for Congress, Feb. 26, 2008; Prados A. & Sharp J., Syria: Political Conditions and the Relations with the United States After the Iraq War, CRS Report for Congress, Feb. 28, 2005; Prados A., Syria: US Relations and Bilateral Issues, CRS Issue Brief for Congress, Jan. 19, 2006.

⁸ Ma'oz M., Washington and Damascus: Between Confrontation and Cooperation, USIP Special Report, Washington, 2005; Yacoubian M., Syria's Relations with Iraq, US Institute of Peace Briefing, April 2007.

⁹ Reform in Syria: Steering between the Chinese Model and Regime Change, Carnegie papers # 69, July 2006.

¹⁰ Հովհաննիսյան Ն. Հ., Արաբական երկրների պատմություն, հ.1-4, Երևան, 2003-2007: Սիրիայի նորագույն պատմության նախորդ ժամանակաշրջանների տարբեր ասպեկտները հանգամանալից ուսումնասիրվել են հայ հեղինակների մի շարք աշխատություններում: Տե՛ս Հովհաննիսյան Ն. Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1945), Երևան, 1975; Կարապետյան Ռ. Կ., Սիրիան անկախության հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000; Григорян Г. М., Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1989.

Մասնավորապես հիշարժան է Ֆ. Լեվերեթի «Ժառանգելով Սիրիան» աշխատությունը¹¹, որը Սիրիայում և նրա շուրջ կատարվող իրադարձությունները քննության է առնում ամերիկյան քաղաքականության շահերի տեսանկյունից: Է. Ջիսերն իր «Առաջնորդելով Սիրիան» մենագրությունում քննարկում է Բաշար ալ-Ասադի բարեփոխումների հեռանկարները և նրա որդեգրած քաղաքականության կենսունակությունը¹²: Չնայած Դամասկոսի նոր քաղաքականության նկատմամբ որոշակի անվստահություն ցուցաբերելուն՝ զգալի է այս հեղինակի անկեղծ ձգտումը այդ բարեփոխումները հաջողված տեսնելու մեջ: Սիրիայի կառավարման համակարգը քննադատական վերլուծության է ենթարկված Շ. Բարի «Բաշարի Սիրիան. վարչակարգը և նրա ռազմավարական աշխարհայացքը» ուսումնասիրությունում¹³: Դ. Լեշի «Դամասկոսի նոր առյուծը»¹⁴ աշխատությունը կառուցված է հեղինակի՝ անձամբ Բաշար ալ-Ասադի հետ ունեցած զրույցների վրա և վերջինիս քաղաքական հայեցակարգի ձևավորման հանգամանքների խորքային վերլուծության ուշագրավ փորձ է: Վ. Փերթեսի «Սիրիան Բաշար ալ-Ասադի օրոք: արդիականացում և փոփոխությունների սահմանը»¹⁵ ուսումնասիրությունում տրվում են Բաշար ալ-Ասադի իշխանության առաջին տարիների արտաքին և ներքին քաղաքականության բավական օբյեկտիվ և իրատեսական գնահատականներ: Դ. Լեշին և Վ. Փերթեսին միավորում է նախագահ Բաշար ալ-Ասադի ներքին և արտաքին քաղաքական նախաձեռնությունների նկատմամբ ունեցած լավատեսությունը: Դրան հակառակ՝ ծայրահեղ կողմնակալ գնահատականներով և Սիրիայի հասցեին չարդարացված մեղադրանքներով է առանձնանում Բ. Ռուբինի «Սիրիայի մասին ճշմարտությունը» աշխատությունը¹⁶:

¹¹ Leverett F., Inheriting Syria: Bashar's Trial by Fire, 2005, Washington D.C.

¹² Zisser E., Commanding Syria: Bashar Al-Asad and the First Years in Power, London-NY, 2007. Ուշագրավ են նաև այդ խնդիրների շուրջ Է. Ջիսերի հետևյալ ուսումնասիրությունները. The Succession Struggle in Damascus, Middle East Quarterly 2, # 3, Sep. 1995, www.meforum.org/264/the-succession-struggle-in-damascus; Syria's Assad: The Approach of a Fifth Term of Office, Policy Watch # 366, Washington Institute for Near East Policy, Feb. 6, 1999, www.washingtoninstitute.org/templateC05.php?CID=1244; Asad's Legacy: Syria in Transition, New York, 2000; Can Bashar al-Asad Hold on in Syria? Policy Watch # 470, June 12, 2000, www.washingtoninstitute.org/templateC05.php?CID=1348; The Syrian Army: Between the Domestic and External Fronts, Middle East Review of International Affairs Journal, Vol. 5, # 1, March 2001, <http://meria.idc.ac.il/journal/2001/issue1/jv5n1a1.html>; Bashar al-Assad's Gamble, Middle East Quarterly, Fall 2006; Where is Bashar al-Assad Heading? Middle East Quarterly, Winter 2008.

¹³ Bar Sh., Bashar's Syria: The Regime and its Strategic Worldview, Comparative Strategy, 2006.

¹⁴ Lesch D.W., The New Lion of Damascus: Bashar al-Asad and Modern Syria, Yale University Press, London, 2005.

¹⁵ Perthes V., Syria Under Bashar al-Asad: Modernisation and the Limits of Change, Oxford, 2004.

¹⁶ Rubin B., The Truth About Syria, New York, 2007.

Սիրիայի զարգացման հիմնական միտումների լուսաբանման են նվիրված Վ.Մ. Ախմելովի¹⁷, Ի.Գ. Կոսաչի և Արխիպովի¹⁸ մի քանի ուսումնասիրությունները¹⁹: Սիրիայի տնտեսական քաղաքականության առանձնահատկություններն են վեր հանել Ա.Օ.Ֆիլոնիկը և Մ.Կ. Ջանբուան²⁰: Սիրիայի և Եվրոպական հանձնաժողովի միջև համաձայնագրի շուրջ բանակցությունների մանրամասներն են պարզաբանում Յու. Վ. Ջինկինան և Դ. Դեյվիսը²¹:

Սիրիայում քաղաքացիական հասարակության և քաղաքական ընդդիմության ձևավորման գործընթացների տրամաբանության լուսաբանման են նպաստել Ա. Ջորջի²², Ս. Ուիլյամսի²³, Ջ. Լանդիսի և Ջ. Փեյսի²⁴ հետազոտությունները: Հ. Վարուկարն ու Օ. Ուինթերը քննադատական վերլուծության են ենթարկել Սիրիայի վերջին խորհրդարանական ընտրությունները²⁵: Սիրիա-իրաքյան հարաբերություններին են անդրադառնում Ջ. Բրնսը և Փ. Ամերը²⁶: Գ. Գամբիլի հոդվածներում շոշափվում են Բաշարի կադրային քաղաքականությանը և կառավարության ներսում կատարվող տեղաշարժերին վերաբերող հարցեր²⁷: Բ. Ուիթթերի՝ «Գարդիան»-ի համար գրած

¹⁷ Ахмелов В.М., Башар Асад: Первые итоги и перспективы на властом поприще, сборник Ближний Восток и Современность, выпуск 20, Москва 2003; его же - Основные тенденции общественно-политического развития Сирии в конце XX, начале XXI вв., Сирия на рубеже столетий. Власть и политика, Глава III, ИИИБВ, ИВРАН, Москва 2003; его же - Сирия при Башаре-Асаде и перспективы отношений с Россией, сборник Ближний Восток и Современность, выпуск 28, Москва 2006.

¹⁸ Архипов А. В., Сирия: Факторы политико-экономических изменений, сборник Ближний Восток и Современность, выпуск 16, ИИИБВ, Москва 2002.

¹⁹ Косач И. Г., Сирия при новом президенте. Тенденции политического развития, Востокведный Сборник, выпуск 3, Институт Изучения Израиля и Ближнего Востока, Москва 2002.

²⁰ Занбуа М.К. и Филоник А.О., Формирование Производственной Инфраструктуры в Сирии, ИБВ, 2005; Филоник А. О., Некоторые аспекты экономической политики Сирии начала нового века, сборник Ближний Восток и Современность, выпуск 21, ИИИБВ, Москва 2004.

²¹ Зинькина Ю.В., Сирия и ЕС накануне ближневосточной конференции: Состояние отношений и перспективы, ИИИБВ, Москва 2007; Davis D., EU Proceeds with Syrian Trade Agreement, Jerusalem Post, May 14, 2004.

²² George A., Syria: Neither Bread nor Freedom, New York, Zed Books, 2003.

²³ Wikas S., Battling the Lion of Damascus, Policy Focus # 69, May 2007.

²⁴ Landis J. & Pace J., The Syrian Opposition, The Washington Quarterly, Vol. 30, # 1, Winter 2006-07.

²⁵ Varulkar H. and Winter O., Criticism of the Upcoming Parliamentary Elections in the Official Syrian Press and Among the Syrian Opposition, The Middle East Media Research Institute, Inquiry and Analysis Series # 345, April 20, 2007, www.memri.org/bin/articles.cgi?Page=archives&Area=ia&ID=IA34507

²⁶ Burns F.J., Syria Turns Over a Top Insurgent, Iraqi Say, New York Times, Feb. 28, 2005, www.monstersandcritics.com/news/middleeast/news/article_1255955.php

²⁷ Gambill G.C., The Myth of Syria's Old Guard, Middle East Intelligence Bulletin, March 2004, www.meib.org/articles/0402_s1.htm Idem., Bashar's Two Major Challenges, MEIB 2, # 6, July 1, 2000, www.meib.org/articles/0007_s1.htm Idem., Bashar Reshuffles Syrian Government, MEIB 2, # 3, March 2000, www.meib.org/articles/0003_s3.htm Idem., Syria's Former PM Takes His Secrets with Him to the Grave, Mideast Mirror, May 22, 2000; Idem., Syria's Night of the Long Knives, MEIB 2, # 5, June 1, 2000, www.meib.org/articles/0006_s1.htm Idem., The Assad Family and the Succession in Syria, MEIB 2, # 6, July 1, 2000, www.meib.org/articles/0007_s2.htm Gambill C.G & Abdelnour Z., Dossier: Rafiq Hariri, Prime Minister of Lebanon, MEIB 3, # 7, July 2001, www.meib.org/articles/0107_1d1.htm

հողվածաշարը լուսաբանում է Դամասկոսի արտաքին և ներքին քաղաքականության տարրեր կողմերը²⁸:

Ատենախոսության տարրեր ասպեկտների ուսումնասիրման համար օգտակար են եղել նաև Ռ. Ուարդի²⁹, Պ. Սիլի³⁰, Դ. Փայսի³¹, Ս. Սաքսի³², Հ. Քոբբանի³³, Բ. Օրբախի և Դ. Շենքերի³⁴, Ս. Այզենստադի³⁵, Դ. Նասսիֆի³⁶, Յ. Բայդաբախի³⁷, Ս. Ուիլի³⁸, Ա. Թաբլերի³⁹, Յ. Ուիլիամսի⁴⁰, Բ.Ա. Ռոբբինսի և Գ.Ջեֆֆի⁴¹ և այլոց հողվածներն ու ուսումնասիրությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔՐ

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքում դրված է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել իրադարձությունները ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և դիալեկտիկական կապի մեջ: Այս սկզբունքների վրա հիմնվելով՝ աշխատանքում օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական քննության և միջդիսցիպլինար հետազոտության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել ատենախոսության մեջ արծածված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

²⁸ Whitaker B., Afraid to let go, The Guardian, June 06, 2005; Idem., Syrian State Inquiring Finds Minister Killed Himself, The Guardian, Oct. 14, 2005; Idem., Syria stands to gain from Lebanon's pain, The Guardian, July 13, 2006.

²⁹ Rabii G.R., Has Hesbollah's Rise Come at Syria's Expense?, Middle East Quarterly, Fall 2007.

³⁰ Seale P., Asad of Syria: The Struggle for the Middle East, University of California Press, 1989.

³¹ Pipes D., The Alawi Capture of Power in Syria, Middle Eastern Studies, 1989.

³² Sachs S., Man in the News: The Shy Young Doctor at Syria's Helm, New York Times, June 14, 2000.

³³ Cobban H., Syria's New Assad No Sure Thing, Christian Science Monitor, June 28, 2000.

³⁴ Orbach B. & Schenker D., The Rise of Bashar Al-Asad, PolicyWatch # 371, March 5, 1999,

www.washingtoninstitute.org/templateC05.php?CID=1249

³⁵ Eisenstadt M., Who Rules Syria?, PolicyWatch # 472, June 21, 2000,

www.washingtoninstitute.org/templateC05.php?CID=1350

³⁶ Nassif D., Maj. Gen. Ghazi Kanaan, MEIB Vol. 2, # 1, Jan. 2000, www.meib.org/articles/0001_15.htm

³⁷ Baidatz Y., Bashar's First Year: From Ophthalmology to a National Vision, Policy Focus 41, July 2001,

www.washingtoninstitute.org/print.php?template=C04&CID=3

³⁸ Reed S., The Rough Road to Reform, Business Week, Sep. 4, 2000.

³⁹ Tabler A., Democracy to the Rescue, Institute of Current World Affairs Letters, March 2006.

⁴⁰ Williams I., Syria still in Washington's sights? The New York Times, Nov. 19, 2003.

⁴¹ Robbins C.A. & Jaffe G., US Sees Efforts by Syria to Control Border with Iraq, The Wall Street Journal, Dec. 10,

2004.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները գործնականում կարող են օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատությունների ինչպես նեղ մասնագիտական դասընթացներում, այնպես էլ ընդհանուր կրթական ծրագրերում:

Աշխատանքում տեղ գտած տարրեր գնահատականներն ու մեկնաբանությունները կարող են կիրառվել քաղաքագիտական ուսումնասիրություններում, ինչպես նաև օգտակար լինել Հայաստանի Հանրապետության մերձավորարևելյան քաղաքականության դրույթների մշակման բնագավառում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում: Աշխատանքում քննարկվող հիմնական խնդիրներն ու դրույթները լուսաբանվել են «Մխիթար Գոշ» գիտա-մեթոդական հանդեսում և «Արաբագիտական ուսումնասիրություններ» հողվածների ժողովածուում հրատարակված հողվածներում:

Հեղինակի հրատարակած հողվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում են հետազոտվող թեմայի գիտական արդիականությունն ու քաղաքական հրատարակությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը, գործնական-կիրառական նշանակությունը, ինչպես նաև տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՆՈՒԲ՝ «ՍԻՐԻԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1990-ականների վերջ - 2000-ականների սկիզբ)», քննարկվում են Սիրիայում 1990-ականներին սկսված իշխանության փոխանցման նախապատրաստման գործընթացը,

իշխանության շարունակականության պահպանմանն ուղղված ջանքերը և Բաշար ալ-Ասադի կողմից երկրի նախագահի պաշտոնի ստանձնման հանգամանքները: Ուսումնասիրվում են սկզբնական շրջանում նրա քաղաքականության մեջ Սիրիայի համար աննախադեպ միտումների դրսևորումները:

Գլխի առաջին ենթագլխում՝ «Իշխանության փոխանցման նախապատրաստումը» քննարկվում է Հաֆեզ ալ-Ասադի ստեղծած քաղաքական համակարգի շարունակականության և կենսունակության պահպանման խնդիրը, որի լուծումը Սիրիայի նախագահը տեսնում էր իշխանության ժառանգական սկզբունքով փոխանցման մեջ: Տարիներ շարունակ հետևողականորեն զբաղվելով Բաշարին իշխանության սահուն փոխանցման կազմակերպմամբ՝ Հաֆեզ ալ-Ասադը բոլոր ջանքերը գործադրեց, որպեսզի որդու նախագահ դառնալը սիրիական հասարակությունը կապեր նրա անձնական արժանիքների և հանուն հայրենիքի բարոյության կատարած ծառայությունների հետ և անխոցելի լինել լեգիտիմության տեսանկյունից: Ընդ որում՝ նախագահի պաշտոնի համար Բաշարին նախապատրաստելու գործընթացն իրականացվեց չորս մակարդակներում. Բաշարի համար ռազմական և անվտանգության կառույցներում հենարանի ապահովում, ապագա առաջնորդի հեղինակության բարձրացում սիրիական հասարակության լայն խավերի մոտ, կառավարման արվեստի հմտություններին տիրապետում, միջազգային ասպարեզում հեղինակության ստեղծում: Հաֆեզ ալ-Ասադը հստակ գիտակցում էր, որ այդ չորս կետերից թեկուզ մեկում թերացումը կբերեր որդու իշխանության անկմանը, հետևաբար՝ իր ստեղծած համակարգի փլուզմանը:

Բաշարի վարկանիշի բարձրացմանը նպաստեց 1990-ականների կեսերին նրա գլխավորությամբ հակակոռուպցիոն ծրագրի իրականացումը՝ թեև այդ ծրագիրը մեծապես մասամբ կրում էր ձևական բնույթ և չէր դիպչում վարչակարգի կենտրոնական անդամների կամ նրանց մերձավորների շահերին:

Համոզմունքներով լինելով պահպանողական՝ Հաֆեզ ալ-Ասադն այնուամենայնիվ գիտակցում էր, որ հաջողության հասնելու համար անհրաժեշտ է Բաշարին ներկայացնել որպես առաջադեմ հայացքների տեր անձնավորության, նորարարի և բարեփոխիչի, որը պատրաստ է արդիականացնել Սիրիան և այն առաջնորդել դեպի քսանմեկերորդ դար:

Երկրորդ ենթագլխում՝ «Բաշար ալ-Ասադի հաստատումը ՍԱՀ նախագահի պաշտոնում» քննության են առնվում Բաշար ալ-Ասադի նախագահ ընտրվելու հանգամանքները:

Բաշարի նախապատրաստման ծրագրի տրամաբանությունը ենթադրում էր նրա առաջխաղացումն ընդհուպ մինչև այնպիսի մի մակարդակի, որից հետո նրա նախագահ ընտրվելը բնական ընթացք կստանար և չէր դիտվի գուտ որպես ժառանգության իրավունքի իրականացման արդյունք: Հաֆեզ ալ-Ասադի ծրագրի համաձայն՝ Բաաս կուսակցության բարձրագույն մարմնի՝ շրջանակային ղեկավարության անդամ ընտրվելը պետք է Բաշարի համար ապահովեր նախագահի պոտենցիալ թեկնածու համարվելու համար անհրաժեշտ կարգավիճակը: Հաֆեզ ալ-Ասադին, սակայն, վիճակված չէր անձամբ գլխավորել այդ գործընթացը, քանի որ նա վախճանվեց կոնգրեսի բացումից ընդամենը մի քանի օր առաջ:

Անսպասելի շրջադարձի հետևանքով առաջացած շփոթն ու անհանգստությունը երկրի ապագայի և կայունության համար հասարակության տարբեր խավերին ստիպեց համախմբվել Բաշար ալ-Ասադի թեկնածության շուրջ: Իր հերթին Բաշարը, որը չէր հասցրել վերջնականապես ձևավորել սեփական հենարանը, իշխանության հասնելու և այն ամրապնդելու համար ուներ ինչպես պետության կառավարման կարևոր լծակներին տիրապետող այսպես կոչված «հին գվարդիայի», այնպես էլ ժողովրդական լայն զանգվածների աջակցության կարիքը: Չնայած ստեղծված բարդ իրավիճակին՝ իշխանության փոխանցումը Բաշարին բավական սահուն կերպով իրականացավ, և հուլիսի 10-ին անցկացված համաժողովրդական հանրաքվեի արդյունքում նա հաստատվեց Սիրիայի նախագահի պաշտոնում:

Երրորդ ենթագլխում՝ «Բաշար ալ-Ասադի քաղաքականության հիմնական միտումների դրսևորումը նախագահության սկզբնական շրջանում», քննարկվում է այն հարցը, թե Բաշար ալ-Ասադն ինչպես էր պատրաստվում դիմակայել բազմաթիվ ներքին խնդիրները և ապահովել երկրի առաջընթացը: Ատենախոսք ցույց է տալիս, որ առաջին ազդանշանները խոսում էին առկա իրավիճակը բարեփոխումների ուղիով շտկելու նորընտիր նախագահի մտադրության մասին: Դա ցայտուն կերպով արտահայտվեց Բաշար ալ-Ասադի՝ 2000թ. հուլիսի 17-ի ՍԱՀ նախագահի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ ունեցած ելույթում⁴²:

⁴² كلمة السيد الرئيس الدكتور بشار الأسد، 17.07.2000.

Միևնույն ժամանակ, փաստերը խոսում են այն մասին, որ երկրի բարձրագույն իշխանությունը ստանձնելու պահին երիտասարդ նախագահը դեռևս չունեի գործողությունների հստակ ծրագիր: Դեպքերի զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, որ այն նրա համար ներկայանում էր որպես աստիճանական ու երկարաժամկետ գործընթաց՝ գործող համակարգի շարունակականության և բարեփոխումների իրականացման հավասարակշռումով:

Սիրիական հասարակության զգալի հատվածը, թեև ցածր կենսամակարդակին, անկեղծ ակնածանք էր տածում Հաֆեզ ալ-Ասադի ազգային քաղաքականության նկատմամբ և բարձր գնահատում երկրում հարատևող կայունությունը: Բաշար ալ-Ասադը գիտակցում էր, որ կտրուկ փոփոխությունները կարող էին առաջացնել ոչ միայն վերնախավի, այլ նաև հասարակության տարբեր խմբերի դժգոհությունը: Նա հաշվի էր առնում նաև բարեփոխումները հապճեպ իրականացնելու ռիսկերը մի հասարակությունում, ուր առկա էին չլուծված էթնիկական և միջկրոնական տարածայնություններ և թերզարգացած տնտեսություն:

Ելնելով այդ ամենից՝ Բաշար ալ-Ասադն առաջ քաշեց բարեփոխումների փուլային տարբերակը՝ այն դասակարգելով ըստ տնտեսական, սոցիալական և քաղաքական հարթությունների:

Չորրորդ ենթագլխում՝ «Կադրային քաղաքականությունը և պայքարը կոռուպցիայի դեմ», ատենախոսն անդրադարձել է Բաշար ալ-Ասադի իրականացրած այն միջոցառումներին, որոնք նպատակ էին հետապնդում առկա խնդիրները լուծելու համար վարչակարգում և հասարակության մեջ հուսալի հենարանի ստեղծումը:

Բաշար ալ-Ասադն ի սկզբանե խուսափեց բացահայտ առձևակատման մեջ մտնել արտոնյալ դիրքեր ունեցող վերնախավի հետ, սակայն ձեռնամուխ եղավ «հին գվարդիայի» կողքին սեփական խորհրդատուների թիմի ձևավորմանը և իր աջակիցներին աստիճանաբար կառավարման համակարգի, ինչպես նաև ուժային կառույցների մեջ ներդրմանը:

Ուշագրավ է, որ իր թիմի անդամներին ընտրելիս Բաշար ալ-Ասադը նշանակություն չէր տալիս նրանց կուսակցական կամ դավանական պատկանելությանը, ինչը նորույթ էր սիրիական իրականության համար:

2001, 2003 և 2004թթ. կառավարության կազմում կատարված տեղաշարժերի բնույթը հաստատում է, որ Բաշար ալ-Ասադն իրոք մտադիր էր երկիրն առաջնորդել տնտեսական բարեփոխումների և արդիականացման ուղիով:

Բաշար ալ-Ասադի կադրային քաղաքականության արդյունքում «հին գվարդիան» ի վերջո տեղը զիջեց բարեփոխականների և տեխնոկրատների թիմին, սակայն դրանից վարչակարգի էությունը շատ բանով չփոխվեց: Բյուրոկրատական ինստիտուտների թարմացումն իրականացվում էր այնպես, որ այն բացասաբար չանդրադառնար որոշումներ ընդունելու նախագահի մենաշնորհի վրա:

Բարեփոխումների հաջողությունը, ինչպես նաև երիտասարդ նախագահի ժողովրդականությունը շատ բանով կախված էին կոռուպցիայի դեմ տարվող պայքարի ընթացքից: Այդ առումով լուրջ խոչընդոտներ հանդիպեցին կապված վերնախավի հատվածական շահերի և կարծրացած բյուրոկրատական կառույցների հետ: Թեև Բաշար ալ-Ասադը ձեռնարկեց կոռուպցիան նվազեցնելուն ուղղված որոշակի քայլեր՝ սակայն նրան չհաջողվեց այդ պայքարին հետևողական բնույթ հաղորդել:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՍՈՒՄ՝ «ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻՎԿԱՄԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ», ներկայացվում են Սիրիայում քաղաքացիական հասարակության ձևավորման փորձերը, նոր պայմաններում իշխող Բաաս կուսակցության պետական և հասարակական կյանքում ունեցած դերակատարության վերաբերմանը: Վերլուծության է ենթարկվում ներքաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների և արդիականացման ընթացքը, դրան նպաստող և արգելակող հանգամանքների ամբողջությունը:

Գլխի առաջին՝ «Քաղաքացիական հասարակության զարգացման փորձերը» ենթագլխում ատենախոսը փաստում է, որ նախագահ Հաֆեզ ալ-Ասադին հաջողվել էր սիրիական հասարակությունը գերծ պահել ներքին քաղաքական պայքարի մեջ ընկղմվելուց: Եթե դա շահեկան էր արտաքին մարտահրավերների դիմագրավման և երկրում կայունության պահպանման առումով, ապա քաղաքացիական հասարակության ձևավորման տեսանկյունից այն առաջընթացի արգելակում էր:

Բաշար ալ-Ասադի իշխանության գալուց հետո քաղաքացիական հասարակության շարժումը Սիրիայում ծագեց ազատականացման և ժողովրդավարացման նկատմամբ ազգաբնակչության տարբեր խավերի և խմբերի

ունեցած նկրտումների արդյունքում: 2000-2006թթ. ընթացքում այն էվոյուցիայի որոշակի փուլեր անցավ՝ աստիճանաբար վերածվելով քաղաքական ընդդիմության:

2000-2001թթ. այսպես կոչված Դամասկոսյան գարունը նշանավորվեց քաղաքացիական հասարակության շատագուրվների կողմից ստորագրված 99-ի, ապա 1000-ի հայտարարություններով⁴³, որոնք առաջին անգամ հանրային քննարկումների առարկա դարձրին քաղաքական բարեփոխումների խնդիրները: Եթե իշխանությունները հանդուրժողականություն ցուցաբերեցին «99-ի հայտարարության» նկատմամբ, որը որևէ կերպ ուղղված չէր վարչակարգի դեմ, ապա շատ ավելի հավանորտ քաղաքական պահանջներ առաջադրող «1000-ի հայտարարությունը» նրանց դրոշմ հակահարված հասցնել քաղաքացիական շարժմանը: Դամասկոսյան գարնանը հաջորդեց Դամասկոսյան ծմեռը: Պարզ դարձավ, որ Բաշար ալ-Ասադի գլխավորությամբ նոր վարչակարգը դեռևս պատրաստ չէր ավելի հեռուն գնալ քաղաքական բարեփոխումների ուղիով: Նոր նախագահի վճռականությունն այդ հարցում ավարտվում էր այնտեղ, որտեղից վտանգվում էր ազատականացման գործընթացների նկատմամբ իշխանությունների վերահսկողությունը:

Դամասկոսյան գարնան հիմնական ձեռքբերումը եղավ Սիրիայում որակապես նոր մթնոլորտի ստեղծումը, որը չանհետացավ նրա հետ միասին: Սիրիան շարունակեց ընթանալ դեպի ավելի ազատ և բաց քաղաքացիական հասարակության ձևավորումը՝ թեկուզև իշխանությունների աչալուրջ վերահսկողության ներքո և ուղղորդմամբ:

Քաղաքացիական շարժման ակտիվացման հաջորդ փուլը նշանավորեց 2005թ. «Դամասկոսի հռչակագիրը»⁴⁴, որը ստորագրել էին տարբեր գաղափարական ուղղություններ ներկայացնող անհատներ և խմբավորումներ: Եթե Դամասկոսյան գարնան ժամանակաշրջանում քաղաքացիական հասարակության շարժումը դեռևս ընդդիմադիր բնույթ չուներ, ապա այժմ նրա գաղափարական պլատֆորմը միաձուլվում էր կրոնա-էթնիկական և քաղաքական ընդդիմության հետ՝ լուրջ վտանգի վերածվելով վարչակարգի համար:

Շարժման քաղաքականացման հաջորդ ցայտուն օրինակը 2006թ. մայիսի «Բեյրութադամասկոսյան հռչակագիրն» էր, որը խստորեն քննադատում էր Դամասկոսի լիբանանյան քաղաքականությունը⁴⁵:

Ընդդիմությանը կարճ ժամանակահատվածում հաջողվեց լուրջ անհանգստություն առաջացնել իշխանությունների մոտ, սակայն, բոլոր դեպքերում, վերջիններիս հաջողվում էր սահմանափակել նրա ազդեցությունը և թույլ չտալ, որ այն հասնի վարչակարգի համար վտանգավոր չափերի: Դրան նայաստեց այն հանգամանքը, որ միջազգային ճնշումների սաստկացման պայմաններում Սիրիայի լայն հասարակությունն իրոք մերժեց և դատապարտեց ընդդիմության ելույթները՝ դրանք համարելով դավաճանական: Դրան հակառակ՝ ավելի բարձրացավ այդ ճնշումներին դիմակայող նախագահ Բաշար ալ-Ասադի և նրա վարչակազմի ժողովրդականությունը: Հատկանշական է, որ 2009թ. սկզբներին պառակտվեց Ազգային փրկության ճակատը, որը հավանում էր քաղաքական ընդդիմության առաջամարտիկը լինելուն:

Երկրորդ ենթագլխում՝ «Բասս կուսակցության վերափոխումը Սիրիայի հասարակական, քաղաքական կյանքում», քննարկվում է Սիրիայում կառավարման համակարգի արդիականացման և ընդհանրապես քաղաքական բարեփոխումների առաջընթացի համար իշխող Բասս կուսակցության՝ երկրի քաղաքական, հասարակական և սոցիալական կյանքում ունեցած որոշիչ դերակատարության վերանայման գործընթացը:

Ցույց է տրվում, որ կուսակցությունը շարունակում էր քաղաքական և սոցիալական հարմար հենարան մնալ նոր նախագահ Բաշար ալ-Ասադի համար: Մյուս կողմից, սակայն, բարեփոխումների և արդիականացման քաղաքականությունն ինչ որ պահի կարող էին դիպչել կուսակցության շահերին և այն վերածել վտանգավոր մրցակցի: Ըստ ամենայնի՝ դա էր պատճառը, որ Բաշարը զգուշորեն ձեռնամուխ եղավ կուսակցության դերի նվազեցմանը երկրի հասարակական, քաղաքական կյանքում՝ զուգահեռաբար ճանապարհ հարթելով բազմակարծության և բազմակուսակցականության համար:

Ատենախոսը վիճարկում է այն տեսակետը, որ բարեփոխումների ենթարկելով Բասսը՝ Բաշար ալ-Ասադը ցանկանում էր ամրապնդել նրա վաղեմի դերակատարությունը երկրի քաղաքական համակարգում, և փորձում ապացուցել, որ կուսակցության հանդեպ Բաշարի վարած քաղաքականությունն ի սկզբանե ուղղորդված է այն վերածելու՝ երկրի կառավարման ամենօրյա խնդիրներին միջամտելու և վարչակարգի քաղաքականությունն ուրվագծելու սահմանափակ

⁴³ www.mcib.org/articles/0010_sdoc0927.htm ; www.friendsofsyria.net/documents/008.html
⁴⁴ http://faculty-staff.ou.edu/L/Joshua.M.Landis-1/syriablog/2005/11/damascus-declaration-in-english.htm
⁴⁵ Տե՛ս www.free-syria.com/en/loadarticle.php?articleid=6924

հնարավորություններով վերահսկողական, խորհրդատվական մարմին հիշեցնող կառույցի:

Հետաքրքիր է, որ Բասսի ազդեցության նվազեցմանն ուղղված քայլերն առաջ չբերեցին նրա ղեկավարության և շարքերի ընդլվզումը: Կուսակցության ղեկավարությունը նոր պայմաններին հարմարվելը նախընտրեց առձակատումից:

2005թ. հունիսի Բասսի կոնգրեսը, թեև առկա սպասումներին, չվերջնականացրեց կուսակցության դերի վերաբժնորումը և անփոփոխ թողեց նրա առաջնորդ դերը: Սիրիայի շուրջ ստեղծված լարվածության պայմաններում Բաշար ալ-Ասադը զգուշացավ ներքին ցնցումներից, որոնք կարող էին առաջանալ իշխող կուսակցության վրա չափից ավելի ճնշում գործադրելու և նրա ազդեցության ոլորտները կտրուկ սահմանափակելու փորձերի դեպքում: Բասսի մենաշնորհային կարգավիճակի վերացումը կարող էր ճանապարհ հարթել նաև կրոնական, էթնիկական կամ համայնքային սկզբունքով ստեղծված շարժումների և կուսակցությունների համար:

2007թ. ապրիլի խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին, որ Կոնգրեսին հաջորդած տարիներին Բասս կուսակցության և նրա գլխավորած ԱԱԾ դիրքերի համար որոշակիորեն պահպանվել է ստատուս քվո:

Երրորդ ենթազխումը՝ «Սոցիալ-տնտեսական բարեփոխումները», վերլուծության են ենթարկվում այն քայլերը, որ ձեռնարկվեցին Բաշար ալ-Ասադի վարչակարգի կողմից երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը բարելավելու և այն ժամանակի նոր պահանջներին հարմարեցնելու համար:

Տնտեսության առողջացման նպատակով նորընտիր նախագահի կարևոր նորամուծությունները հաճախ երկար ժամանակ մնացին թղթի վրա, քանի որ կարծրացած պետական կառավարման համակարգը ունակ չէր առանց կառուցվածքային և ֆունկցիոնալ լուրջ փոփոխությունների ենթարկվելու սատարել բարեփոխումների միտված քայլերը: Հզոր լծակների տիրապետող վերնախավն ու նրա հետ շահկապված գործարարները նույնպես լուրջ արգելք էին արմատական տնտեսական բարեփոխումների համար: Համապատասխան տեղական կադրերի պակասը նույնպես արգելակում էր բարեփոխումների ընթացքը:

Գիտակցելով, որ առանց այս խնդիրների լուծման հնարավոր չէ լիարժեքորեն իրականացնել առաջ քաշված սոցիալ-տնտեսական ծրագրերը՝ Բաշար ալ-Ասադը ջանքերը կենտրոնացրեց վարչական բարեփոխումների վրա:

Նա գիտակցում էր, որ տնտեսական զարգացման համաշխարհային գործընթացները դիմակայելու համար Սիրիային հարկավոր են հուսալի գործընկերներ: Մեկուսացման բացասական հետևանքներից զերծ մնալու նպատակով հետևողական աշխատանքներ տարվեցին ազատ առևտրի շուրջ տարածաշրջանային և երկկողմ համաձայնություններ ձեռք բերելու ուղղությամբ: Այդ առումով հատկապես կարևոր են եվրամիության, արաբական երկրների և Թուրքիայի հետ իրականացվող ծրագրերը:

Տիրապետող կարծիքների համաձայն՝ Բաշար ալ-Ասադի վարչակազմի ձեռնարկած միջոցառումները բավարար չէին ազատ շուկայական տնտեսության անցում կատարելու և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը շտկելու համար: Տնտեսական բարեփոխումների ընթացքը դանդաղում է սոցիալական պրոբլեմների խորացման և սոցիալական հուզումների առաջացման նկատմամբ վախի հետևանքով: Արդյունքում պետությունը շարունակում է միջամտել տնտեսության զարգացմանը՝ ի վերջո արգելակելով այն: Սակայն, հատկապես վերջին տարիներին արձանագրված ակնառու տնտեսական հաջողությունները և առաջընթացն ապացուցում են Բաշար ալ-Ասադի՝ երկիրը դեպի ազատ շուկայական տնտեսություն առաջնորդելու մտադրության լրջությունը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՆՈՒՄ՝ «ՆԱԽԱԳԱՀ ԲԱՇԱՐ ԱԼ-ԱՍԱԴԻ ՏՈՐԱԾԱՆԵՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ», ուսումնասիրվում են Բաշար ալ-Ասադի օրոք Սիրիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ տեղ գտած տեղաշարժերը, դրանց առաջացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, անվտանգության ապահովման նոր մարտահրավերները: Հանգամանալից վերլուծության են ենթարկվում Սիրիայի տարածաշրջանային քաղաքականության երեք դոմինանտ ուղղությունների՝ մերձավորարևելյան, իրաքյան և լիբանանյան, առանձնահատկությունները, առկա խնդիրները լուծելուն միտված միջոցառումները: Փորձ է արվում բացահայտել այդ ուղղություններով Սիրիայի արտաքին քաղաքականության իրական նպատակները:

Առաջին ենթազխումը՝ «Տարածաշրջանային քաղաքականության գլխավոր միտումները», առանձնացվում են Սիրիայի տարածաշրջանային քաղաքականության գլխավոր ուղղություններն ու մարտահրավերները, որոնք նպատակաուղղված են տարածաշրջանում Սիրիայի դիրքերի ամրապնդմանը:

Հեղինակը նշում է, որ Հաֆեզ ալ-Ասադի կոշտ պետական քաղաքականության արդյունքում նվազագույնի էր հասցվել արտաքին գործոնների ազդեցությունը երկրի

ներքին կյանքում, որն իր հերթին տարածաշրջանային ճգնաժամերի պայմաններում դյուրացնում էր միջազգային ճնշումների դիմակայումը:

Սկզբնական շրջանում Բաշար ալ-Ասադը ձգտում էր արտաքին ոլորտում պահպանողական կեցվածք ընդունել և հանգուցային հարցերում հավատարիմ մնալ հաֆեզյան սկզբունքներին: Այնուամենայնիվ՝ համաշխարհային և տարածաշրջանային նոր ճգնաժամային իրավիճակների առաջացումը հարկադրելու էր Բաշար ալ-Ասադին հարմարեցնել հոր ազգային անվտանգության հայեցակարգը փոփոխվող պայմաններին և վերանայել կարծրացած մարտավարական մոտեցումները:

Երկրորդ ենթագլխում՝ «Արաբա-իսրայելական հակամարտությունը», ներկայացվում են 1948թ. ի վեր Իսրայելի նկատմամբ Դամասկոսի քաղաքականության կրած հանգրվանային փոփոխությունները, որոնց դինամիկան Իսրայելի վերացման նկրտումներից հասնում է մինչև նրա հետ խնդիրների դիվանագիտական ճանապարհներով լուծումների որոնումը:

Բաշար ալ-Ասադը վերահաստատեց «արդար և լիակատար խաղաղության Սիրիայի ռազմավարական ընտրությունը», բայց նաև ընդգծեց, որ նման խաղաղություն չէր կարող լինել «ոչ մեր տարածքներից մեկ թիզ գիջելու, ոչ էլ մեր ինքնիշխանությունը վնասելու հաշվին»⁴⁶:

Նրա իշխանության գալու նախօրեին մերձավորարևելյան կարգավորման գործընթացում նոր բարդություններ էին առաջացել՝ կապված բանակցությունների սիրիական և պաղեստինյան հետազոծների ընդհատման և երկրորդ ինթիֆադայի բռնկման հետ: Նման իրավիճակում Սիրիայի նոր իշխանությունները ստիպված էին հավասարակշռել պաղեստինյան դիմադրությանն աջակցելու քաղաքական հրամայականը Իսրայելի հետ հակամարտության մեջ մտնելու հավանականության վտանգից խուսանավելու քաղաքականության հետ: Դրությունը բարդանում էր նաև Հեզբոլլահի գործունի ակտիվացման պատճառով:

Հնարավոր պատերազմի վտանգը չեզոքացնելուն ուղղված ջանքերին զուգահեռ՝ Բաշարը փորձում էր նաև ճանապարհներ գտնել վերադառնալու Իսրայելի հետ բանակցային գործընթացին: Այդ մասին նա ժամանակ առ ժամանակ ազդանշաններ էր ուղարկում Իսրայելին՝ օգտագործելով հնարավոր բոլոր խողովակները և միջոցները:

⁴⁶ كلمة السيد الرئيس الدكتور بشار الأسد، 17.07.2000.

Բաշար ալ-Ասադին անհանգստացնում էր պաղեստինա-իսրայելյան հակամարտության կարգավորման ցանկացած նախաձեռնություն, որտեղ կանտեսվեր կամ երկրորդական դեր կհատկացվեր սիրիական գործոնին: Այդ իսկ պատճառով Դամասկոսը դժկամությամբ ընդունեց 2007թ. դեկտեմբերի Անապոլիսի խորհրդածրոջը: Խաղաղ գործընթացի լուսանցքում չհայտնվելու մտավախությամբ՝ Բաշար ալ-Ասադը պաշտպանում էր Իսրայելի հետ բանակցությունները միաժամանակ բոլոր ուղղություններով առաջ տանելու տեսակետը:

Երրորդ ենթագլխում, որը կոչվում է «Իրաքյան ուղղությունը», ընդգծվում է Իրաքի հետ փոխհարաբերությունների խնդրի մշտապես կարևոր տեղ զբաղեցնելը Սիրիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ: Եթե հաֆեզյան ժամանակաշրջանում այդ փոխհարաբերություններն առավելապես թշնամական էին և աչքի չէին ընկնում փոխվստահության մակարդակով, ապա 21-րդ դարասկզբին դրանք ներկայացան որակապես այլ տեսքով:

Ատենախոսն անդրադառնում է այն գործոններին, որոնք երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության վերելքի պայմաններում ստիպում էին Բաշար ալ-Ասադին որոշակի զգուշավորություն ցուցաբերել Բաղդադի հետ քաղաքական հարաբերություններում:

Հեղինակը վերլուծության է ենթարկում Իրաքի շուրջ Դամասկոսի և Վաշինգթոնի միջև առաջացած լարվածության դրդապատճառները՝ նշելով, որ ԱՄՆ ներթափանցումից հետո իրաքյան խնդիրը փորձաքարի դեր ունեցավ սիրիա-ամերիկյան հարաբերությունների համատեքստում: Դամասկոսը հանդես էր գալիս Իրաքի նկատմամբ պատերազմական գործողություններ սկսելու դեմ, որի հետևանքով Վաշինգթոնը սկսեց նրան մեղադրել Սադդամին աջակցելու, ցամաքային ճանապարհով Իրաք զինամթերքի անօրինական փոխադրումների, իրաքյան պաշտոնյաներին ապաստան տալու, իրաքյան զանգվածային ոչնչացման գեներքի պաշարները սիրիական տարածքում թաքցնելու, միջազգային ահաբեկչությանը սատարելու և նման կարգի այլ «հանցանքների» համար:

Սադդամի վարչակարգի սրընթաց անկումն անհանգստություն առաջացրեց Սիրիայում, քանի որ ամերիկյան հզոր ռազմական մեքենայի հետ շփման գիծն այլևս ինչ-որ վերացական հասկացողություն չէր, այլ անցնում էր սիրիա-իրաքյան սահմանի երկայնքով: Դամասկոսը ստիպված էր ուղիներ որոնել դուրս գալու համար ստեղծված

վտանգավոր իրավիճակից՝ հերքելով իրեն ուղղված մեղադրանքները և ամեն կերպ փորձելով ապացուցել, որ կատարում է իր վրա վերցրած պարտավորությունները: Ընդհանուր առմամբ ԱՄՆ դժկամություն էր ցուցաբերում Իրաքի շուրջ Սիրիայի հետ համագործակցության հարցում, իսկ Դամասկոսը, թեև հանդես էր գալիս ընդդեմ Իրաքում ամերիկյան զինված ուժերի ներկայության, փորձում էր կարևորություն ձեռք բերել ԱՄՆ համար իրաքյան ճակատում:

Ատենախոսը բերում է մի շարք փաստեր, որոնք ապացուցում են, որ ԱՄՆ մեղադրանքները խիստ չափազանցված էին և պարզապես Սիրիային մշտապես հսկողության և ճնշման տակ պահելու նպատակ էին հետապնդում: Նա ցույց է տալիս նաև, որ Սիրիան կենսական հետաքրքրություններ ուներ հետաստղամյան Իրաքում և շահագրգռված էր նրա հետ բարիդրացիական հարաբերություններ զարգացնելու մեջ՝ տարածաշրջանում քաղաքական մեկուսացումից խուսափելու և իր համար տնտեսական հուսալի գործընկեր ապահովելու նպատակով: Դամասկոսի համար խիստ մտահոգիչ էր նաև Իրաքի մասնատման հեռանկարը, որը կարող էր անջատողական տրամադրություններ հրահրել ինչպես Սիրիայում, այնպես էլ խառը կրոնա-էթնիկական նկարագիր ունեցող ողջ տարածաշրջանում: Առաջնորդվելով Իրաքում կայունության վերահաստատման հրամայականով՝ Դամասկոսը նաև հետպատերազմական Իրաքի վրա ազդեցություն պահպանելու ճանապարհներ էր որոնում:

Զորորդ ենթազխում՝ «Լիբանանյան ուղղությունը», ցույց է տրվում, որ շարունակելով Լիբանանի հարցում Հաֆեզ ալ-Ասադի քաղաքականությունը՝ Բաշար ալ-Ասադը ձգտում էր այդ հարևան երկրում ամեն գնով պահպանել ազդեցության լծակները և երկարաձգել սիրիական ռազմական ներկայությունը: Այդ առումով դժվարություն էր առաջացել մի կողմից Լիբանանում հակասիրիական տրամադրությունների խորացման, իսկ մյուսից՝ միջազգային ճնշումների սաստկացման պատճառով: Նման պայմաններում Դամասկոսի խնդիրն էր հնարավորինս երկարաձգել Լիբանանում գտնվելու շրջանը՝ փորձելով այնպիսի հիմք ստեղծել սիրիա-լիբանանյան հարաբերությունների համար, որն ապահովեր Լիբանանի կախվածությունը նաև դուրսբերումից հետո:

Դամասկոսը, զգուշանալով, որ ամերիկյան ներթափանցումը Իրաք կքաջալերի Լիբանանում հակասիրիական ուժերին, և Սիրիան կհայտնվի իր նկատմամբ ոչ

բարեկամական աքցանում, ստիպեց վարչապետ Ռաֆիկ Հարիրիի կառավարությանը հրաժարական տալ: Հակասիրիական ալիքը զագաթնակետին հասավ 2005թ. փետրվարի 14-ին Հարիրիի սպանությունից հետո:

Միջազգային ճնշումների ներքո՝ Սիրիան ստիպված էր արագացնել զորքերի դուրսբերումը, և 2005թ. ապրիլի 26-ին Լիբանանի տարածքը լքեց վերջին սիրիացի զինվորը: Դամասկոսը դուրսբերման որոշումը ներկայացրեց որպես իր քաղաքականության տրամաբանական արդյունքը, որը բխում է երկու երկրների շահերից:

Հեռանալով Լիբանանից, սակայն, Սիրիան ամբողջովին չկորցրեց նրա վրա ազդեցության լծակները: Սիրիամետ ուժերի և առաջին հերթին Հեզբոլլահի ներկայությունը կարևոր պայման էր, որպեսզի Սիրիան շարունակի օգտագործել Լիբանանը՝ որպես խաղաքարտ տարածաշրջանում իր դիրքերը պահպանելու համար:

2006թ. հուլիսի խորայելա-լիբանանյան պատերազմը ի չիք դարձրեց ռազմական ճանապարհով Հեզբոլլահի հետ հաշվեհարդար տեսնելու հույսերը: Ակնհայտ դարձավ, որ նրան զսպելու ամենակարճ ճանապարհն անցնում է Դամասկոսով: Արևմուտքում սկսեցին ինտենսիվ խոսել Սիրիայի հետ երկխոսություն սկսելու անհրաժեշտության մասին: 2007-2008թթ. Լիբանանում նախագահի ընտրության հետ կապված նոր ներքաղաքական ճգնաժամի օրերին Սիրիան հեռու մնաց այդ գործընթացին միջամտելու գայթակղությունից՝ թեև չկարողացավ խուսափել քննադատությունների թիրախ դառնալուց: 2008թ. հոկտեմբերին առաջին անգամ Սիրիայի և Լիբանանի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին:

Բաշարին չհաջողվեց Լիբանանում պահպանել գերիշխանությունը: Նա ստիպված էր հրաժարվել Հաֆեզ ալ-Ասադից ժառանգած Լիբանանի նկատմամբ տարվող քաղաքականությունից: Երկու հարևան երկրների միջև սկսվեցին ձևավորվել նոր որակի հարաբերություններ՝ կառուցված միմյանց ինքնիշխանության փոխադարձ հարգանքի վրա:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, ատենախոսն եզրակացնում է.

- Զգտելով իշխանությունը Բաշարալ-Ասադին փոխանցելու միջոցով պահպանել իր իսկ ստեղծած քաղաքական համակարգի շարունակականությունը՝ նախագահ Հաֆեզ ալ-Ասադը միաժամանակ հետևողական աշխատանք տարավ

ոչ միայն սահմանադրական առումով նախագահի պաշտոնում որդու ընտրության անխոցելիության ապահովման, այլև Սիրիայի լայն հասարակության համար այն ընկալելի դարձնելու ուղղությամբ:

- Ասադների իշխանության շարունակականության պահպանումը հնարավոր դարձավ Բաշար ալ-Ասադին որպես նախագահ տեսնելու հարցում սիրիական հասարակության տարբեր հատվածների շահերի համընկնման շնորհիվ, ինչը նաև նպաստեց երկիրը ապակայունացնող զարգացումներից զերծ պահելուն:
- Ի սկզբանե Բաշար ալ-Ասադի համար բարեփոխումների ճանապարհը միակ միջոցն էր, որով պետք է լուծվեին ներքին քաղաքական և տնտեսական խնդիրները և ապահովվեր երկրի առաջընթացը: Բաշար ալ-Ասադը, սակայն, բարեփոխումների իրականացումը չէր դիտում որպես հապճեպ խնդիր, այլ՝ աստիճանական և երկարաժամկետ գործընթաց թե՛ ռազմավարական, թե՛ մարտավարական իմաստով՝ նախընտրելով առժամանակ հավասարակշռել գործող համակարգի շարունակականությունը և բարեփոխումների ընթացքը:
- 2000-ականների սկզբներին ծագած քաղաքացիական հասարակության շարժումը, որը Սիրիայի ազգաբնակչության տարբեր խավերի և խմբերի կողմից ժողովրդավարական բարեփոխումների նկատմամբ հավատ տածելու արտահայտությունն էր, հեռու էր քաղաքական ընդդիմություն լինելուց: Շարժման քաղաքականացումը և ընդդիմության վերածվելը տեղի ունեցան աստիճանաբար՝ զարգացման որոշակի փուլեր անցնելուց հետո: Ընդ որում՝ ընդդիմության ազդեցությունը երկրի քաղաքական, հասարակական կյանքում այդպես էլ մնաց սահմանափակ:
- Իշխող Բաաս կուսակցությանը հանրության և պետության մեջ վերապահված առաջնորդող դերակատարության նախապես խոստացված վերանայումը, իրական բազմակուսակցական համակարգի ձևավորումը, խորհրդարանի՝ որպես քաղաքական կառույցի ակտիվացումը լիարժեք կերպով չիրագործվեցին ոչ թե հին համակարգը պահպանելու ձգտման, այլ հանձինս Բաասի՝ արտաքին և ներքին վտանգներին դիմակայելու համար հուսալի հենարան ապահովելու հրամայականի հետևանքով:
- Տնտեսության արդիականացումը և սոցիալական լարվածության նվազեցումը Բաշար ալ-Ասադի որդեգրած քաղաքական գծի կարևորագույն բաղադրիչներն

են: Դրանց իրականացման ընթացքը կարելի է բնութագրել որպես «դանդաղ, սակայն՝ նպատակասլաց»: Այդ ուղղությամբ բարեփոխումների թեկուզև քայլ առ քայլ առաջխաղացումը վկայում է ի վերջո ազատ շուկայական տնտեսություն ձևավորելու Սիրիայի ներկա իշխանությունների վճռականության մասին:

- Վերջին տարիների ընթացքում Բաշար ալ-Ասադի արտաքին քաղաքականությունը կառուցվել է տարածաշրջանային երեք առանցքային գործոնների՝ արաբա-իսրայելական հակամարտության, Իրաքի և Լիբանանի հիմնախնդիրների շուրջ:
- Բաշար ալ-Ասադը, փորձելով հավատարիմ մնալ Հաֆեզ ալ-Ասադի արտաքին քաղաքականության հիմնադրույթներին և անվտանգության հայեցակարգին, հարկադրված էր սեփական տարածաշրջանային քաղաքականությունը ձևավորելիս հաշվի նստել համաշխարհային և տարածաշրջանային տեղաշարժերի և նոր ձգնաժամային իրավիճակների հետ:
- Ստեղծվող իրավիճակներից անկախ, Բաշար ալ-Ասադն ի սկզբանե սիրիա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորմանն այլընտրանք չի տեսել: Դամասկոսն իրապես շահագրգռված է թել Ավիվի հետ հակամարտության խաղաղ կարգավորմամբ և ամեն կերպ փորձում է մոտեցնել բանակցությունները վերսկսելու հնարավորությունը: Նույնիսկ Հեզբոլլահին աջակցելը նպատակ ունի ստիպել հակառակորդին վերադառնալու բանակցությունների սեղանին:
- Սադդամի վարչակարգի անկումից հետո Դամասկոսն իրոք շահագրգռված էր Իրաքում կայունության և անվտանգության վերականգնմամբ և պատրաստ էր համագործակցել ԱՄՆ հետ բոլոր խնդիրները լուծելու, մասնավորապես սահմանի վերահսկելիությունը ապահովելու հարցում: Վաշինգթոնը, սակայն, քաջ գիտակցելով Դամասկոսի անկեղծությունը, մեղադրանքների և սպառնալիքների միջոցով փորձում էր այդպիսով սահմանափակել Սիրիայի տարածաշրջանային դերակատարությունը:
- Լիբանանի նկատմամբ վերահսկողության կորուստն, առաջին հայացքից պարտություն թվալով հանդերձ, իրականում նշանակալից առավելություններ ապահովեց Սիրիայի համար: Մասնավորապես թուլացավ միջազգային մեկուսացման սպառնալիքը, նոր հնարավորություններ առաջացան թել Ավիվի

հետ բանակցությունների վերսկսման համար և այլն: Լիբանանի դեպքերը նաև խթանեցին ներքին համախմբումը Սիրիայի իշխանությունների շուրջ:

- Ընդհանրացնելով կարելի է ասել, որ Բաշար ալ-Ասադի որդեգրած քաղաքական գիծն, իրոք, ուղղորդված է երկրում ժողովրդավարացման և արդիականացման գործընթացների հնարավորի սահմաններում խորացմանը և տարածաշրջանում կայունության և անվտանգության ամրապնդմանը: Տեղի ունեցող շեղումները և հետաձգումներն արդյունք են ներքին և արտաքին օբյեկտիվ գործոնների ազդեցության և հիմնկաանում կրում են հարկադրական, մարտավարական բնույթ:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Իշխանության շարունակականության խնդիրը Սիրիայում, «Մխիթար Գոշ», Երևան, 2009, # 1, էջ 35-37:
2. Քաղաքացիական հասարակության շարժումը Սիրիայում (2000-2006թթ.), «Արաբագիտական ուսումնասիրություններ», ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ, Արաբագիտության ամբիոն, հոդվածների ժողովածու, պրակ Գ, Երևան, 2009, էջ 38-54:
3. Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի դիրքորոշումը մերձավորարևելյան խաղաղության գործընթացի նկատմամբ, «Արաբագիտական ուսումնասիրություններ», ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ, Արաբագիտության ամբիոն, հոդվածների ժողովածու, պրակ Գ, Երևան, 2009, էջ 55-64:

МЕЛКОНЯН АШОТ АРМЕНИОВИЧ

СИРИЯ В ПОСТХАФЕЗСКОМ ПЕРИОДЕ: ВНУТРЕННИЕ И ВНЕШНИЕ ВЫЗОВЫ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – "Всеобщая история"

Защита состоится 9 июня 2009 г. 13:00, по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна, 24г, Институт Востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению сущности и последствиям изменений, имеющих место во внешней и внутренней политике Сирии после вступления Башара аль-Асада в должность президента страны в 2000 году.

Геополитические изменения, происходящие в Ближневосточном регионе, попытки его перекройки, возникновение новых очагов напряженности, перестановки вокруг силовых осей, провозглашение глобальной войны против терроризма, ускоренные темпы глобализации - все это не могло обойти стороной Сирию, которая часто появлялась в центре событий. Было очевидно, что политико-экономическая структура, созданная во времена правления предыдущего президента Хафеза аль-Асада (1970-2000), не была в состоянии противостоять вызовам нового времени. Под вопросом оказалось - каким именно путем будет передвигаться Сирия вперед? Насколько глубоки будут политические и социально-экономические реформы, объявленные ее новым президентом Башаром аль-Асадом, и достаточны ли будут они для обеспечения плавного развития страны?

Будущее Ближнего Востока, его мир, стабильность и безопасность во многом зависят от того, как отражаются перемены, происходящие в Сирии, на ее позиции по основным существующим проблемам. Актуальность настоящей темы в первую очередь обусловлена необходимостью выявления динамики этих политических, социально-экономических и общественных перемен. Заинтересованность Республики Армения в установлении мира и стабильности в Ближневосточном регионе придает дополнительную важность избранной теме.

Для достижения цели диссертантом поставлены следующие задачи: 1) проследить шаги, предпринятые для обеспечения преемственности власти в Сирии, 2) выявить проявления новых тенденций и перестановок в политике Башара аль-Асада, 3) изучить процесс и отдельные фазы образования гражданского общества в Сирии, а так же причины преобразования последнего в политическую оппозицию, 4) рассмотреть особенности внутриполитических и социально-экономических реформ и причины их ограниченности, 5) проанализировать перемены политики Сирии в отношении региональных проблем.

Работа состоит из введения, трех глав, заключения и библиографии.

Во введении обосновывается актуальность темы исследования, дается обзор литературы и источников, использованных в работе, формулируются цель и задачи данного исследования, определяются ее теоретическое и практическое значения, а также методологическая основа и научная новизна.

В первой главе – "Сирия в период перехода власти (конец 1990-ых, начала 2000-ых)" – обсуждаются процесс подготовки перехода власти, усиления, направленные на обеспечение ее преемственности, мероприятия, предпринятые для подготовки Башара аль-Асада к должности президента страны, а так же обстоятельства его избрания президентом. Досконально изучаются проявления новых тенденций во внешней политике Башара аль-Асада в начале его президентства, его подходы к реформам и т.д.

Во второй главе – "Задачи модернизации системы и пределы реформ" – представляются попытки образования гражданского общества и реакция государства на это, причины возникновения политической оппозиции, переоценка роли правящей политической партии Баас в новых условиях. Анализируются процессы внешнеполитических и социально-экономических реформ и модернизации, совокупность обстоятельств, тормозящих или способствующих их продвижению.

В третьей главе – "Региональная политика Башара аль-Асада" – изучаются перемены, имеющие место в региональной политике Сирии в годы правления Башара аль-Асада, объективные и субъективные причины их возникновения, новые вызовы обеспечению безопасности. Досконально анализируются особенности трех доминирующих направлений региональной политики Сирии – ближневосточной, иракской и ливанской, а также мероприятия, предпринимавшиеся Дамаском для решения существующих проблем. Выявляются истинные цели, преследуемые внешней политикой Сирии по этим направлениям.

В заключении подводятся итоги исследования. В частности, обобщая, диссертант делает вывод, что несмотря на редкие отклонения от заявленных целей, политическая линия

президента Сирии Башара аль-Асада в действительности направлена на демократизацию и модернизацию собственной страны в пределах возможного и установление прочной стабильности и безопасности в Ближневосточном регионе.

ASHOT MELKONYAN

SYRIA IN POSTHAFEZIAN PERIOD: INTERNAL AND EXTERNAL CHALLENGES.

к 43А